

ք. Երևան

25.06.2020թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/12006-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.2/5532-2020, ՀՀ էկոնոմիկայի 05/7255-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 22520-2020 և Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության 22520-2020, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.3/3365-2020, Կադաստրի կոմիտեի ԴԱ/2770-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դարբաս բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1.9703 հա բազմամյա տնկարկ (կադաստրային ծածկագիր՝ 09-031-0251-0008) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝  Վ. Տերտերյան

քարտուղար՝  Մ. Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ


<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Հ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Դարբաս բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր կատեգորիայի բազմամյա տնկարկներից 1.9704հա հողամասի վրա «Հ 2019 թվականի պետական բյուջեի <Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում> ծրագրով իրականացնել մոդուլային տիպի նոր դպրոցի կառուցման աշխատանքներ:

Դարբաս բնակավայրի ներկայիս դպրոցի շենքը համաձայն «Հ ԱԻՆ «Սեյսմիկ պատպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ Ե-10/14 եզրակացությամբ շենքի տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար և ունի 3-րդ աստճանի վթարայնության աստճան:

Ելնելով վերագրյալից մոդուլային տիպի նոր դպրոցի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է «Հ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Դարբաս բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատերել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության բազմամյա տնկարկներից 1.9704հա հողամասը փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝


 Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
07.07.2020թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ


Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝


 Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
07.07.2020թ

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԻԵՄԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻԷԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻՒՆԻ
ՀԱՄԱՅՆԷԻ ԲՆ. ԴԱՐԲԱՍ ՅՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ



Բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերի կատեգորիա փոխադրվող տարածքի համար տրամադրվող հողեր 1.9704հա

Կատարող  Ա. Կարապետյան